

ԴԵՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ
(ՆԵՐԴԻՐ-ԹԵՐԹԻԿ)
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՑԻԵՆՏԻ ՀԱՄԱՐ
Տրուետեկ®
0,3 % **ակնակաթիլներ, լուծույթ**
Տոբրամիցին

Նախքան դեղի օգտագործումը ուշադիր կարդացեք ներդիր-թերթիկն ամբողջությամբ, քանի որ այն պարունակում է կարևոր տեղեկատվություն:

- Պահեք այս ներդիր-թերթիկը: Հնարավոր է այն կրկին կարդալու կարիք լինի:
- Եթե ունեք լրացուցիչ հարցեր, դիմեք բժշկի կամ դեղագետի:
- Այս դեղը բժիշկը նշանակել է անձամբ Ձեզ: Չի կարելի այն փոխանցել այլ անձանց: Դեղը կարող է վնասել նրանց, եթե նույնիսկ հիվանդության ախտանիշները համընկնում են:
- Եթե Ձեզ մոտ ի հայտ է եկել որևէ կողմնակի ազդեցություն, այդ թվում՝ նաև այնպիսին, որը թվարկված չէ այս ներդիր-թերթիկի 4-րդ բաժնում, ապա խորհրդակցեք բժշկի կամ դեղագետի հետ:

Ինչ բովանդակություն ունի այս ներդիր-թերթիկը

1. Ինչ է Տրուետեկ դեղը և ինչի համար է այն օգտագործվում:
2. Ինչ պետք է իմանալ Տրուետեկ դեղն օգտագործելուց առաջ:
3. Ինչպես օգտագործել Տրուետեկ դեղը:
4. Ինչպիսի կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ:
5. Ինչպես պահել Տրուետեկ դեղը:
6. Ինչ է պարունակում դեղի փաթեթը և այլ տեղեկություններ:

1. ԻՆՉ Է ՏՐՈՒԵՏԵԿ ԴԵՂԸ ԵՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ԱՅՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ

Տոբրամիցինը պատկանում է «ամինոգլիկոզիդային հակաբիոտիկներ» կոչվող խմբին:

Տրուետեկ ակնակաթիլները կիրառվում են չափահասների և մեկ տարեկանից բարձր երեխաների շրջանում տոբրամիցինի նկատմամբ զգայուն բակտերիաներով հրահրված աչքի և կոպի մակերեսային բակտերային վարակների՝ շաղկապենաբորբի և բլեֆարիտի բուժման համար:

2. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՏՐՈՒԵՏԵԿ ԴԵՂՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Մի օգտագործեք Տրուետեկ դեղը, եթե

- ունեք ալերգիա տոբրամիցինի կամ ամինոգլիկոզիդային այլ հակաբիոտիկների նկատմամբ,
- ունեք ալերգիա դեղի ակտիվ բաղադրատարրի կամ օժանդակ նյութերից որևէ մեկի նկատմամբ (թվարկված է ներդիր-թերթիկի 6-րդ բաժնում):

Ալերգիկ ռեակցիաները կարող են ներառել հետևյալ ախտանիշները.

- հևոց, աղմկոտ կամ դժվարացած շնչառություն,
- դեմքի, շրթունքների, լեզվի կամ մարմնի այլ մասերի այտուցվածություն,
- մաշկի ցան, քոր կամ եղնջացան:

Մի օգտագործեք Տրուետեկ դեղը, եթե

- սրվակի փականի և վզիկի հատվածում անվտանգության կնիքը կոտրված է,
- սրվակի կամ փաթեթի կեղծման նշաններ եք նկատում,
- սրվակի կամ ստվարաթղթե տուփի վրա նշված պիտանիության ժամկետը ավարտվել է: Պիտանիության ժամկետի ավարտից հետո դեղի կիրառումը կարող է անարդյունավետ լինել:

Մի օգտագործեք Տրուետեկ ակնակաթիլները, երբ կրում եք կոնտակտային լինզաներ:

Տրուետեկ դեղն որպես կոնսերվանտ պարունակում է բենզալկոնիումի քլորիդ, որը կարող է կուտակվել փափուկ կոնտակտային լինզաներում: Դուք պետք է հեռացնեք լինզաները Տրուետեկ դեղը կիրառելուց առաջ և կրկին տեղադրեք դրանք դեղը կաթեցնելուց առնվազն 15 րոպե անց:

Խորհրդակցեք Ձեր բժշկի հետ, եթե վստահ չեք Տրուետեկ դեղի կիրառումը սկսելու հարցում:

Կիրառման հատուկ հրահանգներ և նախազգուշացումներ

Նախքան Տրուետեկ դեղի օգտագործումը խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղագետի հետ, եթե

- ունեցել եք ալերգիա այլ դեղերի կամ այլ նյութերի (օրինակ՝ սնունդ, կոնսերվանտներ կամ ներկանյութեր) նկատմամբ,
- ունեք կամ երբևիցե ունեցել եք նյարդամկանային խանգարումներ, օրինակ՝ միասթենիա գրավիս կամ Պարկինսոնի հիվանդություն: Այս խմբի հակաբիոտիկները կարող են վատթարացնել մկանային թուլությունը:

Խորհրդակցեք բուժող բժշկի հետ, եթե հղի եք կամ պլանավորում եք հղիություն:

Բժիշկը կտեղեկացնի հղիության շրջանում Տրուետեկ դեղի կիրառման հետ կապված ռիսկերի և օգուտների մասին:

Խորհրդակցեք բուժող բժշկի հետ, եթե կերակրում եք կամ պլանավորում եք կերակրել կրծքով:

Բժիշկը կտեղեկացնի կրծքով կերակրման շրջանում Տրուետեկ դեղի կիրառման հետ կապված ռիսկերի և օգուտների մասին:

Տրուետեկ դեղի և այլ դեղերի միաժամանակյա կիրառումը

Տեղյակ պահեք բուժող բժշկին կամ դեղագետին, եթե օգտագործում եք վերջերս օգտագործել եք կամ պատրաստվում եք օգտագործել այլ դեղեր: Դրանք կարող են լինել այլ ակնակաթիլներ կամ դեղատնից առանց դեղատոմսի ձեռք բերվող որևէ այլ դեղ:

Որոշ դեղեր և Տրուետեկ դեղը կարող են փոխազդել միմյանց հետ: Դրանք ներառում են՝

- բետա-լակտամային հակաբիոտիկները, որոնք կիրառվում են աչքի, ականջի կամ մաշկի վարակների բուժման նպատակով,
- դեղեր, որոնք կարող են հանգեցնել լսողության կորստի,
- ամինոգլիկոզիդային այլ հակաբիոտիկներ, որոնք նման են տոբրամիցինին:

Տրուետեկ դեղը կարող է ազդել այս դեղերի վրա կամ դրանք կարող են ազդեցություն ունենալ Տրուետեկ դեղի արդյունավետության վրա: Հնարավոր է այս դեղերի դեղաչափերի փոփոխության կամ այլ դեղերով փոխարինման անհրաժեշտություն լինի:

Եթե վերոնշյալ դեղերից որևէ մեկի կիրառման հարցում վստահ չեք կամ ունեք այլ հարցեր, դիմեք բուժող բժշկին կամ դեղագետին:

Բժիշկը կամ դեղագետն ունեն ավելի շատ տեղեկատվություն այն դեղերի մասին, որոնք պետք է կիրառեք զգուշությամբ կամ խուսափեք դրանց կիրառումից Տրուետեկ դեղն օգտագործելու ընթացքում:

3. ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՏՐՈՒԵՏԵԿ ԴԵՂԸ

Միշտ օգտագործեք Տրուետեկ դեղը բուժող բժշկի կամ դեղագետի հրահանգներին համապատասխան: Եթե ունեք լրացուցիչ հարցեր, դիմեք բժշկին կամ դեղագետին:

Չափահասների, տարեցների, մեկ տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաների շրջանում թույլատրելի դեղաչափն է մեկ կաթիլ աչքում/աչքերում, օրական 2 անգամ, առավոտյան և գիշերը՝ 7 օր տևողությամբ:

Ծանր վարակների դեպքում բուժման առաջին օրը դեղաչափը կարող է բարձրացվել մինչև մեկ կաթիլ օրական 4 անգամ, ապա հաջորդ 6 օրվա ընթացքում մեկ կաթիլ՝ օրական 2 անգամ:

Հնարավոր վարակներից խուսափելու համար պետք է ուշադիր լինել, որ կաթոցիչի ծայրը չդիպչի կոպերին, հարակից շրջաններին կամ այլ մակերեսներին:

Դեղը կաթեցնելուց հետո փակեք աչքը և մատով սեղմեք քիթ-արցունքային ծորանը: Դա կկանխի կաթիլների անցումը համակարգային արյան շրջանառություն:

Դեղն օգտագործելուց անմիջապես հետո սրվակը պետք է փակել:

Եթե գերազանցել եք դեղաչափը՝ ավելի շատ Տրուետեկ դեղ եք օգտագործել, քան թույլատրելի է

Եթե գերազանցել եք Տրուետեկ դեղի թույլատրելի դեղաչափը, գոլ ջրով լվացեք աչքը:

Եթե դուք մոռացել եք օգտագործել Տրուետեկ դեղը

Չի կարելի օգտագործել կրկնակի դեղաչափ՝ բաց թողնված դեղաչափը լրացնելու նպատակով:

Եթե դադարեցնում եք Տրուետեկ դեղի օգտագործումը

Եթե նույնիսկ Ձեր ավստանիշները թեթևանում են, առանց բժշկի հետ խորհրդակցելու մի դադարեցրեք Տրուետեկ ակնակաթիլների կիրառումը:

Եթե դեղի կիրառման հետ կապված լրացուցիչ հարցեր ունեք, դիմեք բուժող բժշկին կամ դեղագետին:

4. ԻՆՉՊԻՍԻ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ

Եթե Տրուետեկ դեղի կիրառման ընթացքում Ձեր ինքնազգացողությունը չի բարելավվում, այդ մասին հնարավորինս շուտ տեղեկացրեք բուժող բժշկին կամ դեղագետին:

Տրուետեկ դեղը կիրառվում է շատ պացիենտների շրջանում աչքի վարակների բուժման նպատակով, բայց որոշ անձանց մոտ այն կարող է առաջացնել անցանկալի կողմնակի ազդեցություններ: Բոլոր դեղերը կարող են առաջացնել կողմնակի ազդեցություններ: Երբեմն դրանք կարող են լինել լուրջ, բայց հիմնականում դրանք ոչ լուրջ կողմնակի ազդեցություններ են: Որոշ կողմնակի ազդեցությունների առաջացման դեպքում հնարավոր է ունենաք բուժման անհրաժեշտություն:

Մի անհանգստացեք ներկայացված կողմնակի ազդեցությունների ցանկից: Հնարավոր է դրանցից և ոչ մեկը չդրսևորվի Ձեզ մոտ:

Եթե ունեք լրացուցիչ հարցեր, դիմեք բուժող բժշկին կամ դեղագետին:

Դիմեք բուժող բժշկին կամ դեղագետին, եթե նկատում եք և Ձեզ անհանգստացնում է հետևյալ կողմնակի ազդեցություններից որևէ մեկը.

- գրգռվածություն կամ օտար մարմնի առկայության զգացողություն աչքում,
- եղջերաթաղանթի բորբոքում (աչքի առջևի արտաքին թափանցիկ մակերես) (կետային կերատիտ)
- կոպերի այտուց, քոր,
- աչքի կարմրություն,
- ուժեղ արցունքահոսություն:

Սրանք Տրուետեկ դեղի առավել հաճախ հանդիպող կողմնակի ազդեցություններն են, որոնք սովորաբար թեթև են և կարճատև:

Եթե ի հայտ է գալիս ստորև նշված կողմնակի ազդեցություններից որևէ մեկը, դադարեցրեք Տրուետեկ դեղի կիրառումը և այդ մասին անմիջապես տեղեկացրեք բուժող բժշկին կամ դիմեք շտապ բժշկական օգնության այցելելով մոտակա բժշկական հաստատություն:

- մաշկի ցան,
- դեմքի, ձեռքերի կամ ոտքերի այտուցվածություն,
- աղմկոտ, դժվարացած շնչառություն, հևոց,
- վարդագույն, ուժեղ և հանկարծակի քոր առաջացնող այտուցներ մաշկի վրա, որը կոչվում է նաև եղնջացան կամ եղնջատենդ:

Գերզգայունության այս ռեակցիաները կարող են դիտվել որպես շատ լուրջ կողմնակի ազդեցություններ: Հնարավոր է ունենաք շտապ բժշկական օգնության կամ հիվանդանոցային պայմաններում բուժվելու անհրաժեշտություն: Այս կողմնակի ազդեցություններն առաջանում են շատ հազվադեպ:

Կարող են դիտվել այլ կողմնակի ազդեցություններ, ներառյալ՝

- թարթիչների կորուստ
- մաշկի գունաբացում:

Դիմեք բուժող բժշկին կամ դեղագետին, եթե Ձեր ինքնազգացողությունը վատանում է:

Որոշ անձանց մոտ կարող են նկատվել նաև վերևում չթվարկված այլ կողմնակի ազդեցություններ:

Կասկածելի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդում

Կողմնակի ազդեցության ի հայտ գալու դեպքում այդ մասին տեղեկացրեք բժշկին կամ դեղագետին: Սա վերաբերում է նաև այս ներդիր-թերթիկում չնշված որևէ այլ կողմնակի ազդեցությանը: Դուք կարող եք կողմնակի ազդեցության մասին ուղղակիորեն առցանց հաղորդել ՀՀ ԱՆ ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ հետևյալ հղումով. www.pharm.am կամ զանգահարել թեժ գիծ՝ հետևյալ հեռախոսահամարներով. (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05:

Կողմնակի ազդեցությունների մասին հաղորդելով՝ դուք նպաստում եք այս դեղի անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության ապահովմանը:

5. ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ՏՐՈՒԵՏԵԿ ԴԵՂԸ

Դեղը պահեք երեխաների համար անտեսանելի և անհասանելի տեղում:

Դեղը պահեք 25 °C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում:

Դեղը չի կարելի սառեցնել:

Դեղի սրվակն առաջին անգամ բացելուց հետո կարող եք պահել 28 օր՝ 25 °C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում:

Մի օգտագործեք տուփի վրա նշված պիտանիության ժամկետի ավարտից հետո:

Պիտանիության ժամկետը ավարտվում է նշված ամսվա վերջին օրը:

Դեղերը չի կարելի նետել կոյուղի կամ կենցաղային թափոնների մեջ: Չօգտագործված դեղերի հետ վարվելու մասին հարցրեք դեղագետին: Այս միջոցառումներն ուղղված են շրջակա միջավայրի պահպանությանը:

6. ԻՆՉ Է ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԴԵՂԻ ՓԱԹԵԹԸ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է պարունակում Տրուեստեկ դեղը

Տրուեստեկ դեղի ակտիվ բաղադրատարրը տոբրամիցինն է՝ 3 մգ/մլ (տոբրամիցինի սուլֆատի ձևով):

Տրուեստեկ դեղի կազմում առկա օժանդակ նյութերն են՝ բենզալկոնիումի քլորիդ, կալիումի դիհիդրոֆոսֆատ, դինատրիումի ֆոսֆատի դոդեկահիդրատ, նատրիումի քլորիդ, հիդրօքսիէթիլցելյուլոզա և ներարկման ջուր:

Ինչ տեսք ունի Տրուեստեկ դեղը և ինչ է պարունակում փաթեթը

Պարզ, անգույն լուծույթ:

5 մլ սպիտակ պլաստմասայե սրվակներ՝ կաթոցիչով:

Ստվարաթղթե տուփում առկա է մեկ սրվակ՝ ներդիր-թերթիկի հետ միասին:

Գրանցման հավաստագրի իրավատեր

Ֆարմատեք ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0064, 111 Ռաֆֆու փողոց

Արտադրող

Բալկանֆարմա-Ռազգրադ ԱԴ,

Բուլղարիա, Ռազգրադ, 7200,

68 «Ապրիլսկո Վաստանիե» բուլվար

Ներդիր-թերթիկի վերջին վերանայման ամսաթիվը

12/2020